

## **ՎԿԱՅԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

«Հ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է քրեական գործով ապացույցների շրջանակը, համաձայն որի՝ ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Թույլատրելի ապացույցների շարքում օրենսդիրը դասել է նաև վկայի ցուցմունքները, և սահմանել է մեղադրյալի՝ իր դեմ վկայած անձանց հետ առերես հարցաքննվելու իրավունքը, ինչպես նաև պաշտպանության կողմի՝ վկային հարցաքննելու իրավունքը: Սակայն, բազմաթիվ են դեպքերը, երբ օրենսդրությամբ երաշխավորված վերոնշյալ իրավունքները սահմանափակվում են, և հարց է առաջանում կարո՞ղ են արդյոք այդ իրավունքները առհասարակ սահմանափակվել: Այս հարցին իր նախադեպային որոշումներով անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ Դատարանը):

«Վկայի ցուցմունք» հասկացությունը օգտագործվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետում, որտեղ ամրագրված է՝ «...Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.... հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:»: Այն պատճառով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքները հանդիսանում են նույն հոդվածի 1-ին մասով ամրագրված արդարացի դատաքննության իրավունքի հատուկ տարրեր, Դատարանը սովորաբար բողոքը քննության է առնում այդ երկու դրույթների համադրման լույսի ներքո: Նախադեպային այս դիրքորոշման էությունն այն է, որ Դատարանի կարծիքով հնարավոր է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի պահանջները ձևական առումով կատարված չլինեն, սակայն Դատարանը համարի, որ այդ կետի խախտում թույլ չի տրվել, քանի որ «վարույթն ամբողջության մեջ վերցրած եղել է արդարացի»<sup>1</sup>: Դատարանի խնդիրն է պատասխանել այն հարցին, թե արդյոք դատավարությունը որպես ամբողջություն, ներառյալ ապացույցները ձեռք բերելու միջոցները, եղել է արդար:

Ընդհանրապես ապացույցների ընդունելության հարցի վերաբերյալ Դատարանը ունի այն դիրքորոշումը, որ այդ հարցը առաջին հերթին կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ, և որ, որպես կանոն,

<sup>1</sup> Տե՛ս Դավիթ Խաչատուրյան, «Ապացույցների թույլատրելիության վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի հիմնական նախադեպային դիրքորոշումները», «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի լրատու», Հ-3, Երևան, 2009, էջ 3-39

ապացույցների գնահատման հարցը թողնված է ներպետական դատարաններին: Դատարանի խնդիրն է պարզել, թե որքանով է քննությունն ընդհանուր առմամբ, ներառյալ ապացույցների ձեռքբերման եղանակը, եղել արդար: Բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում: Նախաքննության ընթացքում տրված նման ցուցմունքներն իբրև ապացույց դիտարկելը ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին և 3-րդ մասի (դ) կետին, եթե երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային, ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում<sup>2</sup>: Մինևույն ժամանակ, Դատարանը իր որոշումներում արձանագրել է, որ միայն բողոքն առ այն, որ իրեն թույլ չեն տվել հարցաքննելու որոշ վկաների, ինքնին բավարար չէ, և նա պետք է հիմնավորի, թե ինչու է կարևոր համապատասխան վկաներին լսելը և ինչով է վերջիններիս տված ցուցմունքը նպաստելու ճշմարտության բացահայտմանը<sup>3</sup>:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարող ենք արձանագրել, որ ըստ Դատարանի նախադեպային որոշումների՝

✓ վկաներ կանչելու անհրաժեշտությունը գնահատելու իրավասությունը վերապահվում է ներպետական դատարաններին,

✓ Դատարանը պարզում է որքանով է գործի քննությունն ընդհանուր առմամբ, ներառյալ ապացույցների ձեռքբերման եղանակը, եղել արդար,

✓ մեղադրյալին պետք է համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային,

✓ յուրաքանչյուր գործով դիմումատուն պետք է հիմնավորի, որ վկայի հարցաքննումն անհրաժեշտ էր ճշմարտությունը պարզելու համար:

### ***Նեյի Հարությունյան***

*ՀՀ փաստաբանների պալատի*

*երիտասարդական խորհրդի նախագահ*

<sup>2</sup> Mamikonyan v.Armenia, գանգատ թիվ 25083/05, 2010թ. մարտի 16 վճիռ, պարբ. 41-42

<sup>3</sup> Mamikonyan v.Armenia, գանգատ թիվ 25083/05, 2010թ. մարտի 16 վճիռ, պարբ. 43-47